ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
11 փետրվարի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 48 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սուրեն Գրիգորյանը և Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդական Արփենիկ Մուրադյանը, քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը, առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետ Արմեն Առաքելյանը, զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչությանպետ Արկադի Թեմուրյանը, տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Նարեկ Բարսեղյանը, արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2025 թվականի մարտի 18-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – Կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Առաջարկն ընդունվեց ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 27 հարց, որից՝ 2-24-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/4 հասցեում հասարակական նշանակության շենքի կառուցման նախատեսվող գոր-ծունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոց հ.2 հասցեում բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայ-նություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ.130 և 134 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործու-նեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց հ. 54, 54/1 և 54/3 հասցեներում գտնվող հուշարձան-շենքի ամրակայման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի իրականացման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
6. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման և ջարդիչ կայանի տեղադրման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ.Հովսեփյան փողոց հ.38/8 հասցեում բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
8. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
9. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Չզեկուցվող)
10. Կազմակերպված ծառայողական ավտոկա-յանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
11. Հրանտ Ենգիբարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
12. Ալեքսանդր և Անահիտ Թոփչյանների հի-շատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
13. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի N724-Ն, 2022 թվականի դեկտեմբերի 20-ի N 683-Ն, 2023 թվականի փետրվարի 14-ի N 723-Ն և 2023 թվականի մայիսի 23-ի N785-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

14. Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
15. Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
16. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտա հ.53/10 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
17. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Դավիթ Բեկի թաղամաս հ. 106/9 հասցեում հասարակական նշանակության շինության (քարերի ցուցասրահ) կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
18. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ. 45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
19. Երևան քաղաքում ղազախ բանաստեղծ, ղազախական գրականության հիմնադիր Աբայ Կունանբաևի պատվին այգի անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
21. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 19-ի N246-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
23. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 267-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
24. «Երևանի հ.156 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
25. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
26. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
27. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)

Ելույթով հանդես եկավ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը:

Երևանի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի հերթական նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ելույթով հանդես եկավ ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը և առաջարկեց 2025 թվականի փետրվարի 11-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան կամ չզեկուցվող 14-րդ՝ «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին» և 15-րդ՝ «Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին» հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը և հայտնեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը դեմ է 2025 թվականի փետրվարի 11-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ քվեարկության է դրվում 2025 թվականի փետրվարի 11-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկը.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 25, դեմ՝ 31, ձեռնպահ՝ 0

Առաջարկը չընդունվեց:

Քվեարկության դրվեց 2025 թվականի փետրվարի 11-ի նիստի օրակարգի նախագծի չզեկուցվող 14-րդ՝ «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին» և 15-րդ՝ «Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին» հարցերը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկը.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 25, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 2

Առաջարկը չընդունվեց:

Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար, նախագծի հեղինակ Արամ Թորոսյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի հերթական նիստի օրակարգի նախագծից հանում է 26-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց.

Օրակարգի 2-րդ՝ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/4 հասցեում հասարակական նշանակության շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին», 3-րդ՝ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոց հ.2 հասցեում բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» և 16-րդ՝ «Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտա հ.53/10 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցերի վերաբերյալ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/4 հասցեում հասարակական նշանակության շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

3.Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոց հ.2 հասցեում բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

4. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ.130 և 134 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

5.Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց հ. 54, 54/1 և 54/3 հասցեներում գտնվող հուշարձան-շենքի ամրակայման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի իրականացման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

6.Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման և ջարդիչ կայանի տեղադրման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

7.Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ.Հովսեփյան փողոց հ.38/8 հասցեում բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

8.Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

9.Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)

10.Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)

11.Հրանտ Ենգիբարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)

12.Ալեքսանդր և Անահիտ Թոփչյանների հի-շատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)

13.Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի N724-Ն, 2022 թվականի դեկտեմբերի 20-ի N 683-Ն, 2023 թվականի փետրվարի 14-ի N 723-Ն և 2023 թվականի մայիսի 23-ի N785-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

14.Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին: (Զեկուցվող)

15.Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին: (Չզեկուցվող)

16.Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտա հ.53/10 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

17.Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Դավիթ Բեկի թաղամաս հ. 106/9 հասցեում հասարակական նշանակության շինության (քարերի ցուցասրահ) կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

18.Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ.45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

19.Երևան քաղաքում ղազախ բանաստեղծ, ղազախական գրականության հիմնադիր Աբայ Կունանբաևի պատվին այգի անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)

20.Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)

21.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 19-ի N246-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)

22.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)

23.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 267-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)

24. «Երևանի հ.156 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)

25.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

26.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 15, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 24-րդ հարցերը:

Տ.Ավինյանը տեղեկացրեց, որ չզեկուցվող հարցերի (բացառությամբ՝ 2-րդ, 3-րդ և 16-րդ հարցերի) վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրվել են դրական եզրակացություններ:

2. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/4 հասցեում հասարակական նշանակության շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/4 հասցեում հասարակական նշանակության շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

3. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոց հ.2 հասցեում բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոց հ.2 հասցեում բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

4. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ.130 և 134 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ.130 և 134 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

5. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց հ. 54, 54/1 և 54/3 հասցեներում գտնվող հուշարձան-շենքի ամրակայման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի իրականացման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց հ. 54, 54/1 և 54/3 հասցեներում գտնվող հուշարձան-շենքի ամրակայման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի իրականացման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

6. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման և ջարդիչ կայանի տեղադրման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման և ջարդիչ կայանի տեղադրման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արգելվում են տնտեսական կամ այլ գործունեության իրականացումը, ինչպես նաև նման գործունեություն իրականացնող օբյեկտների նախագծումն ու կառուցումը, եթե դրանք կարող են հանգեցնել մարդու առողջության վատթարացման, բույսերի և կենդանիների գենետիկ ֆոնդի ոչնչացման, մարդու և շրջակա բնական միջավայրի համար անդառնալի հետևանքների: Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի (այսուհետ՝ Նորմեր) 120-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ բետոնի արտադրության գործարանը դասակարգվում է չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ շարքին: Նորմերի 116-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ներգործության աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական, արտադրական օբյեկտների շենքերի և շինությունների համար՝ կախված հզորությունից, շահագործման պայմաններից, շրջակա միջավայր արտանետվող աղտոտիչների բնույթից և քանակից, առաջացող աղմուկից, թրթռումից և այլ վնասակար ֆիզիկական գործոններից, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումներից, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա դրանց անբարենպաստ ազդեցությունը նվազեցնելու անհրաժեշտությունը, արդյունաբերական, արտադրական օբյեկտների սանիտարական դասակարգմանը համապատասխան, սահմանվում են սանիտարապաշտպանական գոտիների հետևյալ կողմնորոշիչ չափերը՝ (...) 4) չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 100 մ: Տվյալ նախատեսվող գործունեության դեպքում սանիտարապաշտպանական գոտու չափը չի պահպանվում, քանի որ մոտակա բնակելի շինությունը գտնվում է 93,7 մետր հեռավորության վրա: Նորմերի 97-րդ կետի համաձայն՝ III, IV և V վտանգավորության դասերի արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանական գոտիների սահմանումը, չափերի փոփոխությունը, որոնք ներառվում են սանիտարապաշտպանական գոտու նախագծում, իրականացվում է, հիմք ընդունելով.

1)առողջապահության ոլորտում գործող օրենսդրական պահանջները, սանիտարական կանոնները, 2)սանիտարապաշտպանական գոտու **նախագծի վերաբերյալ** շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննական եզրակացությունը և դրանում ներառվող առողջապահության ոլորտի պետական լիազորված մարմնի եզրակացությունը/կարծիքը, ինչը տվյալ նախատեսվող գործունեության դեպքում նախաձեռնողի կողմից չի պահպանվել:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

7. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ.Հովսեփյան փողոց հ.38/8 հասցեում բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոց հ.38/8 հասցեում բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

8. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Հ/Հ	**Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն**	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
1	վարչության պետ	1	697,000		697,000

2	վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
-	**Պլանավորման, զորակոչային հարցերի և զորահավաքային բաժին**				
3	Բաժնի պետ	1	408,000		408,000
4	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
5	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
-	**Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բաժին**				
6	Բաժնի պետ	1	408,000		408,000
7	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
8	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
9	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**12**			**4,348,600**

»

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «787», «263,200,445» թվերը փոխարինել համապատասխանաբար «788», «263,489,445» թվերով:

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2316», «693,119,845» թվերը փոխարինել «2317», «693,408,845» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

9. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի «Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում» ծրագրով ձեռք բերված 8,700,000 (ութ միլիոն յոթ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ արժեքով թվով 1 (մեկ) վերելակը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության հետ նվիրատվության պայմանագրի կնքումը:

10. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2025 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

11. Հրանտ Ենգիբարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ Հրանտ Ենգիբարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոցի հ.14Ա հասցեում փակցնելու համար:

12. Ալեքսանդր և Անահիտ Թոփչյանների հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն հայ գրող, գրականագետ, գրաքննադատ, դրամատուրգ, արձակագիր, թարգմանիչ Ալեքսանդր և հայ դերասանուհի, արձակագիր, թարգմանիչ Անահիտ Թոփչյանների հիշատակը հավերժացնող հուշատախտակն Ազատության պողոտա հ.3/1 հասցեում փակցնելու համար:

13. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի N724-Ն, 2022 թվականի դեկտեմբերի 20-ի N 683-Ն, 2023 թվականի փետրվարի 14-ի N 723-Ն և 2023 թվականի մայիսի 23-ի N785-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի «Երևան քաղաքում փողոց վերանվանելու մասին» N724-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1) «1.Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Սերո Խանզադյան փողոցի՝ հ.65 և հ.56 տնատիրություններից մինչև հ.152 և հ.175/4 տնատիրություններ տանող ճանապարհահատվածը և նրան զուգահեռ նրբանցքները վերանվանել «Նորքի փողոց», «Նորքի փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է Նորքի փողոցի հ.151 և հ.153 հասցեների հարակից տարածքից, Նորքի գերեզմանատան մոտով հասնում մինչև Գյուրջյան փողոցի սկզբնամաս), «Նորքի փողոց, 2-րդ նրբանցք» (սկսվում է Նորքի փողոցի հ.122 հասցեի հարակից տարածքից, հատում Գ.Հովսեփյան փողոցը և շրջանաձև պտտվելով հասնում հ.9 հասցեի հարակից տարածք)։»:

2. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի «Երևան քաղաքում Օհան Դուրյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» N 683-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1) «1.Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 5-րդ փողոցն անվանակոչել հայ մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի անվամբ՝ «Օհան Դուրյան փողոց» (սկսվում է Նորքի գերեզմանատան մոտից, ջրանցքին զուգահեռ հասնում՝ Երևանի Արգիշտի Առաջին արքային անվան հ.61 հիմնական դպրոց)։»:

3. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Երևան քաղաքում Լուսինե Զաքարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» N 723-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1) «1. Երևան քաղաքի Նորքի 7-րդ փողոցը և նրբանցքն անվանակոչել հայ երգչուհի, Կոմիտասի, հայ հոգևոր երգերի ու տաղերի կատարող Լուսինե Զաքարյանի անվամբ՝ «Լուսինե Զաքարյան փողոց» (սկսվում է Արա Հարությունյան փողոցից, Օհան Դուրյան փողոցին զուգահեռ, հասնում հեռուստաաշտարակից արևելք ընկած անտառաշերտ), «Լուսինե Զաքարյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է Լուսինե Զաքարյան փողոցի հ.98 հասցեից, հասնում մինչև հ.110 հասցե):»:

4. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մայիսի 23-ի «Երևան քաղաքում Երեմ Վարդանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» N 785-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1) «1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 4-րդ փողոցը և նրբանցքն անվանակոչել հայ քանդակագործ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Երեմ Վարդանյանի անվամբ՝ «Երեմ Վարդանյան փողոց» (սկսվում է Արա Հարությունյան փողոցից, հասնում՝ Այծեմնիկ Ուրարտուի փողոց), «Երեմ Վարդանյան փողոց, 1-ին նրբանցք (սկսվում է Նորքի 2-րդ փողոցի հ.32 հասցեի հարակից տարածքից, հասնում մինչև Երեմ Վարդանյան փողոցի հ.25 հասցեի հարակից տարածք):»:

14. Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագիծը՝ համաձայն հավելվածի:

15. Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Նուբարաշեն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը՝ համաձայն հավելվածի:

16. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտա հ.53/10 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտա հ.53/10 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

17. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Դավիթ Բեկի թաղամաս հ. 106/9 հասցեում հասարակական նշանակության շինության (քարերի ցուցասրահ) կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Դավիթ Բեկի թաղամաս հ. 106/9 հասցեում հասարակական նշանակության շինության (քարերի ցուցասրահ) կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

18. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ.45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ.45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ. 45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու նախատեսվող գործունեության վերաբերյալ 2025թ. հունվարի 21-ին ժամը 11:00-ին Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում օրենքով սահմանված կարգով տեղի է ունեցել առաջին հանրային լսումը: Համայնքի կողմից ապահովվել է համայնքի ներկայացուցչի մասնակցությունը:

2) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված **«ՀՀՇՆ 30-01-2023 «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ»** 241-րդ կետի համաձայն՝ տարբեր նշանակության կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը բնակավայրի ընդհանուր տարածքի նկատմամբ պետք է լինի 40%-ից ոչ պակաս, իսկ բնակելի (բնակեցման) տարածքի սահմաններում՝ 25%-ից ոչ պակաս: Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ. 45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագծման աշխատանքների համար հիմք է հանդիսացել 07.10.2022թ. տրամադրված հ. 01/18-07/1-Դ-82263-874 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք), որի համաձայն կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին (հողամասի մակերես՝ 2299,89 մ2) պետք է կազմի 40 տոկոս և ավելի, այսինքն՝ 919,956 մ2: Նախաձեռնողի կողմից ներկայացված էսքիզային նախագծի համաձայն հողամասի մակերեսը կազմում է 2293,8 մ2, կանաչապատման մակերեսը՝

918,3 մ2, սակայն նախաձեռնողի կողմից տրամադրված տվյալների ուսումնասիրությունից պարզվել է, որ նախատեսվող գործունեության կանաչապատ տարածքի մակերեսը կազմում է 802 մ2 (34,8 տոկոս), այսինքն տվյալ նախատեսվող գործունեության դեպքում չի պահպանվում վերը նշված պահանջը, քանի որ նախատեսվող կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է 34,8 տոկոս:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

19. Երևան քաղաքում ղազախ բանաստեղծ, ղազախական գրականության հիմնադիր Աբայ Կունանբաևի պատվին այգի անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ալմա-Աթայի փողոցում գտնվող 2400 քմ ընդհանուր մակերեսով այգին անվանակոչել ղազախ բանաստեղծ, ղազախական գրականության հիմնադիր Ա. Կունանբաևի պատվին:

20. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

1. ՈՐՈՇՎԵՑ - **1**. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 632-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Հավելվածի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Երևանի քաղաքապետին կամ վարչական շրջանի ղեկավարին ներկայացնում է էլեկտրոնային եղանակով (քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման և սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվություններ ստանալու համար դիմումները կարող են ներկայացվել նաև թղթային եղանակով)՝ N 2 ձևին համապատասխան դիմում, որին կից ներկայացվում են.

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

2) շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման վկայականի պատճենը.

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը.

4) դիմումատուի Երևան համայնքի հանդեպ պարտավորությունների բացակայության վերաբերյալ Երևանի վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի պատճենը.

5) օբյեկտի ճակատային մասի գունավոր լուսանկարը:»:

2) Հավելվածի 6-րդ կետից հետո լրացնել նոր 6.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրվող թույլտվությունների դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչությունը դիմումների վերաբերյալ սահմանված կարգով ներկայացնում է եզրակացություն:»:

21. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 19-ի N246-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 19-ի «Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին» N246-Ա որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով սահմանված աուդիտորական ծառայության ձեռքբերման գործընթացը իրականացնել «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ մեկ անձից գնում կատարելու ձևով՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:»:

22. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածի 49-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

49. Օրակարգի հաստատումից հետո Հանձնաժողովի հերթական նիստում հարցերը քննարկվում են հետևյալ ընթացակարգով՝

1) Հանձնաժողովի հերթական նիստը վարողը ըստ օրակարգի ներկայացնում է քննարկվող հարցը և դրա վերաբերյալ զեկուցողին.

2) զեկուցողի ելույթ՝ մինչև տասը րոպե.

3) Հարց տալու կամ ելույթ ունենալու ցանկություն ունեցող անձինք դիմում են նիստը նախագահողին: Հարցը տրվում է, ինչպես նաեւ ելույթ ունեցողները հանդես են գալիս ըստ դիմելու հաջորդականության, նիստը նախագահողի հայտարարությամբ: Հարցի համար տրվում է մինչև երկու րոպե, իսկ պատասխանի համար մինչև չորս րոպե, այնուհետև հարց տվողին և զեկուցողին արձագանքելու համար տրվում է մինչև երկուական րոպե: Յուրաքանչյուր ավագանու անդամ ունի երկու հարցի և մեկ ելույթի իրավունք:

4) ավագանու անդամի ելույթ՝ մինչև հինգ րոպե.

5) զեկուցողի եզրափակիչ ելույթ՝ մինչև հինգ րոպե.

6) քվեարկություն:

23. **Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին**:

2. ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի **«Երևան համայնքում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 267-Ն որոշման** 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) 14-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 14-րդ ենթակետից հետո լրացնել նոր 15-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«15) Երևան համայնքի վարչական տարածքում բացօթյա առևտուր իրականացնելու կամ Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերից և շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի, այդ թվում՝ բանկոմատների, վճարային տերմինալների կամ սառնարանների, սուրճի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների կամ այլ դիսպենսերների, սարքերի, սարքավորումների կամ բացօթյա առևտուր իրականացնելու համար այլ առարկաների (այսուհետ՝ սարքավորում) տեղադրման թույլտվության համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝

ա. Արաբկիր վարչական շրջանի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 20000 /քսան հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

բ. Կենտրոն վարչական շրջանի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 26000 /քսանվեց հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

գ. Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքներում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 16000 /տասնվեց հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար:»:

24. «Երևանի հ.156 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Երևանի հ.156 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել հայ գրող, արձակագիր և դրամատուրգ, ԽՍՀՄ և ՀՀ գրողների միության անդամ Զորայր Խալափյանի անվամբ՝ «Երևանի Զորայր Խալափյանի անվան հ.156 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 13

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2025 թվականի փետրվարի 11-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

25. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 13 անդամ.

1.Հայկ Գրիգորյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

2.Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար

3.Իոսիֆ Կուբատյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

4. Հայկ Միրզոյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

5.Արմենակ Դանիելյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

6.Սուսաննա Մելիքյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

7.Աննա Ավետիսյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

8.Տիգրան Պետրոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

9. Արամ Թորոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

10. Գրիգոր Իսկանդարյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

11. Արմեն Քոչարյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

12.Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

13.Լևոն Լևոնյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը,

քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1. Սամվել Հակոբյան-Երևանի ավագանու Մայր Հայաստան» խմբակցության անդամ

2.Գրիգոր Իսկանդարյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

3. Արշակ Սարգսյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

4. Սամվել Հարոյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության քարտուղար

5. Աննա Ավետիսյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

6. Ռոբերտ Ծովյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

7. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 17-րդ ենթակետով հայտարարվեց տասնհինգ րոպե ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 11.40-ին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետի 1.2-րդ, 1.3-րդ, 2.2-րդ, 2.3-րդ, 3.2-րդ, 3.3-րդ, 4.2-րդ, 4.3-րդ, 5.2-րդ, 5.3-րդ, 6.2-րդ, 6.3-րդ ենթակետերից հանել «Երևան քաղաքում հաշվառված» բառերը.

2) Որոշման 1-ին կետի 3.5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.5) «90 օր» ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ Երևանի պատվավոր քաղաքացիների կամ Երևան քաղաքում հաշվառված 4 և ավելի երեխա ունեցող (ունեցած) ծնողների կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց,

հաշմանդամություն ունեցող երեխաների կամ Երևան քաղաքի դպրոցների, ուսումնարանների, քոլեջների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ծնողազուրկ աշակերտների, ուսանողների (սովորողների) համար՝ անվճար.».

3) Որոշման 1-ին կետի 4.5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.5) «90 օր» էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ Երևանի պատվավոր քաղաքացիների կամ Երևան քաղաքում հաշվառված 4 և ավելի երեխա ունեցող (ունեցած) ծնողների կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց, հաշմանդամություն ունեցող երեխաների կամ Երևան քաղաքի դպրոցների, ուսումնարանների, քոլեջների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ծնողազուրկ աշակերտների, ուսանողների (սովորողների) համար՝ անվճար.».

4) Որոշման 1-ին կետի 5.5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.5) «365 օր» ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 365 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ Երևանի պատվավոր քաղաքացիների կամ Երևան քաղաքում հաշվառված 4 և ավելի երեխա ունեցող (ունեցած) ծնողների կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց, հաշմանդամություն ունեցող երեխաների կամ Երևան քաղաքի դպրոցների, ուսումնարանների, քոլեջների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ծնողազուրկ աշակերտների, ուսանողների (սովորողների) համար՝ անվճար.».

5) Որոշման 1-ին կետի 6.5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.5) «365 օր» էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 365 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ Երևանի պատվավոր քաղաքացիների կամ Երևան քաղաքում հաշվառված 4 և ավելի երեխա ունեցող (ունեցած) ծնողների կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց, հաշմանդամություն ունեցող երեխաների կամ Երևան քաղաքի դպրոցների, ուսումնարանների, քոլեջների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ծնողազուրկ աշակերտների, ուսանողների (սովորողների) համար՝ անվճար.».

6) Որոշման 1-ին կետի 7-րդ և 8-րդ ենթակետերում «8 ուղևորություն» բառերը փոխարինել «անսահմանափակ քանակով ուղևորություններ» բառերով.

7) Որոշման 1-ին կետի 9-րդ և 10-րդ ենթակետերում «30 ուղևորություն» բառերը փոխարինել «անսահմանափակ քանակով ուղևորություններ» բառերով.

8) Որոշման 1-ին կետի 11-րդ և 12-րդ ենթակետերում «90» թվերը փոխարինել «180» թվերով.

9) Որոշման 1-ին կետի 13-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«13) «Բազմակի օգտագործման» 10 ուղևորություն ներառող ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 45 օրվա ընթացքում 10 ուղևորության օգտագործման հնարավորությամբ՝ 1500 դրամ.».

10) Որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«14) «Բազմակի օգտագործման» 10 ուղևորություն ներառող էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 45 օրվա ընթացքում 10 ուղևորության օգտագործման հնարավորությամբ՝ 1500 դրամ.».

11) Որոշման 1-ին կետի 13.1-ին, 13.2-րդ, 13.3-րդ, 13.4-րդ, 14.1-ին, 14.2-րդ, 14.3-րդ և 14.4-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերի, ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերը ուժի մեջ են մտնում 2025 թվականի մարտի 1-ից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 17

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

26. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 16 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար

2. Նատալյա Սինորյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

3. Զինա Չալիկյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

4. Տիգրան Ավինյան-Երևանի քաղաքապետ

5. Հայկ Սահակյան-Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

6. Արմեն Մկրտչյան-Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

7. Արմեն Գալջյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության ղեկավար

8. Քրիստինե Վարդանյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

9. Լուսինե Սարգսյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

10. Աշոտ Սարգսյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

11. Հարություն Մանվելյան-Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

12. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար

13. Միեր Բեջանյան-Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության քարտուղար

14. Դիանա Քերոբյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

15. Արման Բաբաջանյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

16. Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 12 անդամ.

1. Վահան Ավագյան-Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար

2. Միքայել Խաչատրյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

3. Տիգրան Պետրոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

4. Գրիգոր Իսկանդարյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

5. Լևոն Լևոնյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

6. Քրիստինե Վարդանյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

7. Զարուհի Աղաջանյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

8. Իզաբելլա Աբգարյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար

9. Գոլար Բալդրյան- Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբացության անդամ

10. Սեդա Տեր-Մինասյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

11. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

12. Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբացության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյանը, «Հանրապետություն» խմբակցության անունից՝ Հայկ Սահակյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից՝ Արմեն Գալջյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 27, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 0

Որոշումը չընդունվեց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Ն. Ղուկասյանը